«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ>>

Դաստիարակ՝ ՀԱՍՄԻԿ ՌՈԲԵՐՏԻ ԶՈՒՐԱԲՅԱՆ

Մանկապարտեզ՝ «ԲԵՐԴԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2
ԳԼՈՒԽ 1 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....5
1.1 ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....**Ошибка! Закладка не определена.**
1.2 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 7
1.3 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՓՈՒԼԵՐԸ.....10
1.4 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ 13
1.5 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 13
1.6 ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՍ.....14
1.7 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ.....14
1.8ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ՈՐՊԵՍ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԵՐԱՌՄԱՆ ՄԻՋՈՑ.....16
ԳԼՈՒԽ 2 <<ԷՔՍԿՈՒՐՍԻՅԱ ԴԵՊԻ ԲԵՐԴ-ԱՄՐՈՑ ՂԱԼԻՆՋԱՔԱՐ>> 16
2.1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 16
2.2 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՊԼԱՆԸ 18
2.3 ԴԻՏԱՐԿՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....22
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....**Ошибка! Закладка не определена.**6
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 257

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էքսկուրսիան նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերից մեկն է, որը ապահովում է կոնկրետ պատկերացումների և տպավորությունների ձևավորում, օգնում դաստիարակել սեր բնության, մշակութային արժեքների նկատմամբ, հնարավորություն է տալիս տեսնել կապերը, փոխկապվացությունները առարկաների երևույթների միջև, ստեղծում է յուրահատուկ զգացողություններ, դրական հուզական մթնոլորտ, բարձր տրամադրություն։

Էքսկուրսիան ակտիվ ուսուցման ձևերից է, լուծում է ճանաչողական, ուսուցման, դաստիարակչական, կրթական և զարգացման խնդիրներ՝ ապահովելով ծրագրային և չափորոշչային վերջնարդյունքների իրագործում, կարողունակությունների ձևավորում։ Էքսկուրսիան որպես երևույթ գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից։ Որպես ուսուցման ձև, որը նպաստում դիտողունակության զարգացմանը, ինքնուրույն աշխատանքի կարողությունների զարգացմանը նկարագրվել և ներ է մուծվել մանկավարժական պրոցեսի մեջ 17-18րդ դարերում Եվրոպական առաջադեմ մանկավարժների կողմից։ Էքսկուրսիաների դերը կարևորել է մանկավարժության հայր Յ.Ա.Կոմենսկին, ինչպես նաև այնպիսի հանրահայտ մանկավարժներ, ինչպիսիք են Ջ. Լոկկը, Յ.Հ.Պեստլոցցին, Ժ.Ժ. Ռուսսոն, ռուս ականավոր հոգեբան-մանկավարժ Վ.Ս. Վիգոտսկին և այլոք։ [3;4]

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել էքսկուրսիայի էությունը, նշանակությունը, նպատակները և խնդիրները, կառուցվածքը և փուլերը, տեսակները և դասակարգման հիմքերը, իմանալ էքսկուրսիայի անցկացմանը ներկայացվող պահանջները, տեսնել ինչ հնարավորություն է ընձեռում էքսկուրսիան, ծրագրային վերջնաարդյունքների ապահովման, կարողունակությունների ձևավորման հարցում։ Հետազոտության նպատակն է պարզել, որքանով է նպատակահարմար էքսկուրսիայի կիրառումը նոր չափորոշչից բխող պլանավորման նոր պահանջներից ելնելով ։

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում իրականացրել եմ բազմաթիվ էքսկուրսիաներ՝ մեծ բավականություն ստանալով իմ կատարած աշխատանքից,

քանի որ տեսել եմ, թե ինչպես են լուծվում կրթադաստիարակչական խնդիրները հաճույք և երջանկություն պատճառելով մեր փոքրիկ <<աշխարհը ճանաչողներին>>: Նրանց աչքերի փայլը, դեմքի ժպիտը, գոհունակությունը ապացուցում են, որ էքսկուրսիան անհրաժեշտ և անփոխարինելի գործունեության ձև է և, չնայած անցկացման բարդություններին և դժվարություններին, պետք է կազմակերպվի հնարավորինս հաճախակի՝ հնարավորություն տալով սովորել հաճույքով, հետաքրքրությամբ, ուսումնասիրելով, հետազոտելով, ակտիվ փոխազդեցությունների մեջ մտնելով, ինքնուրույն աշխատանքի արդյունքում:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է երկու գլուխներից և եզրակացությունից: Վերջում տեղադրված է Օգտագործված գրականության ցանկը:

Առաջին գլուխը տեսական մասն է, որտեղ անդրադարձ է կատարվել էքսկուրսիայի առաջացման պատմությանը, դերին, նշանակությանը, նպատակներին, խնդիրներին, փուլերին, տեսակներին, անցկացմանը ներկայացվող պահանջներին: Առանձին ենթագլուխներով նշվել են նաև էքսկուրսիաների կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքի երեխաների հետ և էքսկուրսիաների արդյունավետությունը ԿԱՊԿՈՒ երեխաների ներառման գործընթացում:

Երկրորդ գլուխը գործնական մասն է, նկարագրված է հետազոտության ընթացքը, իմ անցկացրած էքսկուրսիայի նախապատրաստական աշխատանքը, պլանը և դիտարկողների պատասխանների վերլուծությունը:

Վերջում գրված են աշխատանքի արդյունքում իմ կատարած եզրակացությունները և տեղադրված է օգտագործված գրականության ցանկը:

ԳԼՈՒԽ 1 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Էքսկուրսիան Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ուսուցման կազմակերպման կարևոր ձևերից է, որն ապահովում է երեխաների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ կոնկրետ պատկերացումների և տպավորությունների ձևավորումը։[1] Էքսկուրսիա /լատիներենից՝ ուղևորություն/ նշանակում է կոլեկտիվ ուղևորություն, զբոսանք, շրջագայություն, զբոսարշավ՝ գիտա-կրթական կամ զվարճության նպատակով։[2] Հնագույն ժամանակներում գիտելիքի և փորձի փոխանցումը իրականացվում էր աշխատանքային պրոցեսում։ Հասարակության զարգացմանը համընթաց անհրաժեշտություն է առաջանում գիտելիքի փոխանցման նոր ձևերի։ Մանկավարժության պատմության էջերը վերլուծելիս տեսնում ենք, որ մարդկության պատմության զարգացման ընթացքում աշխարհի հետ ծանոթացման ակտիվ ձևերը՝ ուսուցման և դաստիարակության նպատակով տարածության մեջ տեղաշարժվելու օրինակները գոյություն են ունեցել հնագույն ժամանակներից։ Գրավոր աղբյուրների վերլուծությունը վկայում է այնպիսի իրադարձությունների մասին, որոնք մենք հիմա անվանում ենք էքսկուրսիա, և կարող ենք դիտարկել որպես էքսկուրսիայի մասին առաջին արձանագրություններ։

Դեռևս Հին Աշխարհի մեծ փիլիսոփաներ Պլատոնը և Արիստետելը կարևորել են ճամփորդությունների դաստիարակչական նշանակությունը։ Նրանք լայնորեն կիրառում էին զբոսանքները իրենց աշակերտների հետ ուսուցման նպատակով։ Նրանց աշխատություններում նկարագրվում են երևույթներ, որոնք մենք վստահաբար կարող ենք էքսկուրսիա համարել։ Միջնադարի գործիչների աշխատություններում էքսկուրսիաների երևույթի մասին նկարագրությունների քանակը և բազմազանությունը զգալիորեն ավելանում է։

Համալսարանների առաջացմանը զուգահեռ զանգվածաբար կիրառվում էր ուսանողների տեղաշարժը կրթական նպատակով։ Մանկավարժության հայրը համարվող չեխ անվանի մանկավարժ Յ.Ա.Կոմենսկին նշում էր, որ կրթությունը պետք է ավարտվի երկամյա ճամփորդությամբ։ Էքսկուրսիան կարևորվում էր նաև Ջ.Լոկկի, Յ.Հ. Պեստալոցցու աշխատություններում։[3] Դեռևս 18րդ դարում ֆրանսիացի ականավոր փիլիսոփա Ժ.Ժ.Ռուսսոն հայտնում էր այն միտքը, որ էքսկուրսիան զարգացնում է երեխաների դիտողականությունը, շրջակա աշխարհի ուսումնասիրման ինքնուրույնությունը, հնարավորություն տալիս տեսնել կապերը երևույթների միջև, որը նպաստում է նյութի առավել հստակ յուրացմանը։[4] Ռուս մանկավարժության պատմության մեջ լայնորեն կիրառվում էին կրթական ճամփորդությունները դեպի արտասահման, որոնց նկատմամբ մեծ սեր ուներ նաև Պյոտր Առաջինը։ Նա ստեղծել է նաև Ռուսաստանում առաջին թանգարանը Պետերբուրգում։ Էքսկուրսիաների նկատմամբ հետաքրքրությունը ավելանում է խորհրդայրն ժամանակաշրջանում։ Ժամանակի մի շարք մանկավարժներ կարևորում էին էքսկուրսիաների դերը։ Անվանի հոգեբան-մանկաբարժ Լ. Ս. Վիգոտսկին ողջունում էր մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացումը հուզա-զգացմունքային փորձի հիման վրա։ [8]

Հայ մանկավարժական իրականության մեջ էքսկուրսիաների դերը կարևորել է հայ անվանի մանկավարժ Խ. Աբովյանը։ Նա լայնորեն կիրառում էր էքսկուրսիաներ իր մանկավարժական գործունեության մեջ։ Էքսկուրսիաների ժամանակ հանձնարարում էր աշակերտներին հանդիպած բույսերից վերցնել և տնկել իրենց ստեծած այգում։ Այսպիսով՝ էքսկուրսիան որպես երևույթ գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից։ Էքսկուրսիան ՝ որպես ուսուցման ձև, որը նպաստում է դիտողունակության զարգացմանը, ինքնուրույն աշխատանքի կարողությունների զարգացմանը նկարագրվել և ներ է մուծվել ուսուցման պրոցեսի մեջ 18-19րդ դարերում Եվրոպական առաջադեմ մանկավարժների կողմից։

1.2 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տուրիստական գրականության մեջ էքսկուրսիան բնորոշվում է որպես շրջակա աշխարհի, բնության առանձնահատկությունների, ժամանակակից և պատմական իրադարձությունների, կենցաղի տարրերի, այսինքն՝ տեսարժան վայրերի՝ իրենց գտնման վայրում զննական ճանաչման գործընթաց։ [5]

Ի.Ա. Կաիրովի մանկավարժական հանրագիտարանում էքսկուրսիան ներկայացվում է որպես ուսումնադաստիարակչական աշխատանքի մեթոդ և ձև, որը հնարավորություն է տալիս դիտել, ուսումնասիրել տարբեր առարկաներ և երևույթներ բնական, իրենց համար սովորական պայմաններում /բնություն, պատմական վայր, արտադրամասեր, թանգարաններ և այլն։

Ա.Ա. Կազլովսկու ուսումնական ձեռնարկում էքսկուրսիան ներկայացվում է որպես պարապմունքի տեսակ, որը հնարավորություն է տալիս բնական իրավիճակում երեխաներին ծանոթացնել բնության, մշակութային օբյեկտներին, մեծահասակների գործունեությանը։

Էքսկուրսիան ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերից է, որը հնարավորություն է տալիս իրականացնել տարբեր առարկաների և երևույթների դիտում, ուսումնասիրում բնական պայմաններում կամ դրա համար նախատեսված հատուկ պայմաններում։ Էքսկուրսիան Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերից մեկն է։ Այն կրթական, մանկավարժական գործընթացի մաս է կազմում և հնարավորություն տալիս ձեռք բերել գիտելիքներ, պատկերացումներ, կոնկրետ, վառ փաստերի հիման վրա, տեսնել ուսումնասիրող առարկաների և երևույթների միջև կապերը, փոխկապվածությունները, մարդու վերահսկող և շինարար ուժը։ Էքսկուրսիան դաստիարակում է իր ձևով և բովանդակությամբ, նպաստում է աշխարհաճանաչմանը, դիտողունակության զարգացմանը, առաջացնում է հետաքրքրություն դեպի շրջապատող աշխարհը, հասարակությունը, ամրապնդում գիտակցական կարգապահությունը, կազմակերպվածությունը, ինքնուրույնությունը, արթնացնում սեր, հոգատար վերաբերմունք դեպի բնությունը, մշակույթը։ Էքսկուրսիան ընդլայնում է սաների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում նոր

պատկերացումներով, տպավորություններով, հնարավորություն տալիս անմիջականորեն դիտել, ուսումնասիրել առարկաներ, երևույթներ, որոնք ուսումնական հաստատությունում տեսնել հնարավոր չէ։[7]

Երեխաների համար էքսկուրսիան ճամփորդություն է, որը ստեղծում է յուրահատուկ զգացողություններ, դրական հուզական մթնոլորտ, բարձր տրամադրություն։ Այն իրենից ներկայացնում է շրջապատող միջավայրի առարկաներ և երևույթների ճանաչման զննական գործընթաց, որոնք գտնվում են բնական պայմաններում կամ հատուկ տարածքներում՝ թանգարաններում, գիտահետազոտական ինստիտուտներում, լաբորատորիաներում, արտադրամասերում և այլն։

Ճանաչողությունը սկսվում է զգայություններից, իրական աշխարհի զգայությունները և ընկալումները իմաստավորվում և վերամշակվում են մեր գիտակցության մեջ։ Վերացական գաղափարները մեր գիտակցության մեջ ավելի հեշտ են ամրակայվում, եթե զուգակցվում են զննականությամբ, ակտիվությամբ, ուսումասիրություններով, հույզերի ուղեկցությամբ։

Էքսկուրսիայի ժամանակ կիրառվող մեթոդներից են դիտումը և զրույցը, պատմելը։ Դիտումը էքսկուրսիայի հիմնական մեթոդն է, որի հիմքում առարկաների, երևույթների գիտակցված, նպատակաուղղված ընկալումն է՝ նրանց մասերի, հատկությունների ընկալումը, վերլուծությունը, իմաստավորումը, համադրումը անցյալի փորձի հետ։ Դիտումը ձևավորվում է մարդու կյանքի ողջ ընթացքում։ Ուսումնական էքսկուրսիայի էական առանձնահարկությունն է զննականությունը, որի շնորհիվ սանը ավելի հեշտ ու արագ յուրացնում է նյութը՝ հնարավորություն ստանալով տեսնել, շոշափել, զգալ այն, ստուգել, ճշտել, կոնկրետացնել ունեցած գիտելիքները, պատկերացումները, ամրապնդել, հարստացնել, խորացնել դրանք։[7]

Էքսկուրսիան իրականացնում է կրթադաստիարակչական ֆունկցիա, ձևավորում է աշխարհայացք։ Այսինքն էքսկուրսիայի ժամանակ իրականացվում է կրթության ուսուցանող և դաստիարակչական ֆունկցիան, ձևավորվում են սոցիալական, մշակութային և այլ կարողություններ։ Էքսկուրսիան լուծում է դիդակտիկ խնդիրներ /գիտելիքի փոխանցում,պատկերացումների ձևավորում, ճանաչողության զարգացում/ և դաստիարակչական խնդիրներ /աշխարհայացքի ձևավորում, վարքի, խոսքի

կուլտուրայի ձևավորում/։[6] Ուսուցումը կյանքի հետ կապելու, ուսուցման մեթոդները և ձևերը կատարելագործելու և ակտիվացնելու պահանջից ելնելով՝ էքսկուրսիան դիտվում է որպես ուսուցման կազմակերպման յուրահատուկ ձև, աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց, որի միջոցով յուրացումն ավելի խորն է լինում և անցնում ավելիաշխույժ և հետաքրքիր մթնոլորտում։ [4] Էքսկուրսիան լուծում է ճանաչողական, մանկավարժական խնդիրներ, հնարավորություն տալիս ստանալ խորը, բազմազան սոցիալ-մշակութային գիտելիքներ, պատկերացումներ, օգնում է հաղթահարել անծանոթ միջավայրում կողմնորոշման բարդությունը, հարմարվողականության խոչընդոտները։ Էքսկուրսիան լուծում է հետևյալ խնդիրները.

- Հարստացնում է գիտելիքները պատկերացումները անմիջական ընկալման , ակնառու պատկերացումների փաստացի նյութի կուտակման հիման վրա
- Հաստատում է կապեր իրակաության և տեսության միջև, կապեր կյանքի երևույթների միջև
- Զարգացնում է ստեղծագործական ինքնուրույնության, ինքնակազմակերպման, փոխօգնության ընդունակությունները
- Հարստացնում է գեղագիտական զգացմունքները
- Զարգացնում դիտողականությունը, հոգեկան գործընթացները, հույզերը
- Ակտիվացնում է ճանաչողությունը
- Դաստիարակում սեր, հարգանք սեփական երկրի, բնության, մշակույթի հանդեպ
- Զարգացնում է խոսքը, հաղորդակցման կարողությունները

Էքսկուրսիայի ժամանակ կրթական և դաստիարակչական խնդիրները լուծվում են միասնականորեն։ Անհրաժեշտ է պլանավորել գիտելիքների և կարողությունների ծավալը, մտածել ինչ վերաբերմունք, բարոյական որակներ, գեղագիտական զգացմունքներ պետք է ակտիվացվեն։ Մշակութային այցերը՝ որպես էքսկուրսիայի տարատեսակ, նպաստում են սաների գեղագիտական զարգացմանը։ Մշակութային արժեքների գեղեցկությունը առաջացնում է խորը ապրումներ, որոնք նպաստում են

գեղագիտական զգացմունքների, գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Այցելությունները մշակութային օջախներ զարգացնում է գեղեցիկը կյանքում, առօրյայում, աշխատանքում տեսնելու, գեղեցիկը գնահատեու կարողությունը, լուծում գեղագիտական դաստիարակության խնդիրներ, համակողմանի ներդաշնակ զարգացման խնդիրներ: Էքսկուրսիան նպաստում է նաև ֆիզիկական զարգացմանը, լուծում ֆիզիկական զարգացման խնդիրներ՝ առողջության պահպանում, ամրապնդում, ֆիզիկական կարողությունների զարգացում: Էքսկուրսիան լիարժեք ապահովում է Նախադպրոցական կրթության կարողունաությունների ձևավորումը: Այսպիսով՝ էքսկուրսիան հանդիսանում է ակտիվ ուսուցման ձև, հնարավորություն ընձեռնելով հաղթահարել ուսուցման ֆորմալ բնույթը, ապահովում է ուսուցման կապը կյանքի հետ՝ ակտիվացնելով նախադպրոցական գործունեության բոլոր տեսակները, մոտեցնում է երեխային բնությանը, մշակույթին, օգնում ճանաչել աշխարհը իր բազմազանության և զարգացման մեջ:

1.3 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՓՈՒԼԵՐԸ

Էքսկուրսիան լուծում է ուսուցման, դաստիարակության, զարգացման համալիր խնդիրներ: Այն սովորական ժամանցի ձև չէ, ինտելեկտուալ գործունեություն է՝ նպատակաուղղված, պլանավորված, կազմակերպված աշխատանք, որը պահանջում է հոգեկան և ֆիզիկական մեծ ջանքեր: Առանձնացնում են էքսկուրսիայի հետևյալ կառուցվածքային բաղադրիչները.

- Ներածական զրույց
- Խմբային դիտում
- Անհատական դիտում
- Անհրաժեշտ նյութերի հավաքում
- Խաղեր հավաքած նյութերի հետ
- Եզրափակիչ մաս, ամփոփում

Էքսկուրսիան ինքնաբուխ միջոցառում չէ: Երեխաների հետ նախապես անց է կացվում նախապատրաստական աշխատանք՝ զրույց, պարապմունքներ, խաղեր: Էքսկուրսիայի անցկացումը պահանջում է բովանդակության ճիշտ պլանավորում, կազմակերպում, ստացված արդյունքների ամփոփում: Նրա փուլերն են.

- Նախապատրաստում
- Անցկացում
- Ամփոփում

Առանց գործնական և հոգեբանական նախապատրաստման էքսկուրսիան կդառնա աննպատակ և անարդյունավետ։ Էքսկուրսիայի նախապատրաստումը պահանջում է որոշակի կազմակերպչական և ստեղծագործական աշխատանք։ Անհրաժեշտ է որոշել էքսկուրսիայի թեման, օբյեկտը, նպատակը, բովանդակությունը՝ ելնելով ծրագրային վերջնարդյունքներից և չափորոշչից։ Գոյություն ունեցող հազարավոր օբյեկտներից պետք է ընտրել թեմային առավել նպատակահարմար։ Օբյեկտը պետք է նախապես ուսումնասիրվի, բացահայտվեն դաստիարակչական հնարավորությունները։ Կարևոր է որոշել էքսկուրսիայի անունը, որը պետք է լինի հիշվող, հասկանալի, առանց բարդությունների։ Էքսկուրսիայի նպատակը որոշվում է ելնելով ծրագրային վերջնարդյունքից, այն որոշում է էքսկուրսիայի ուղղվածությունը և ընթացքը։ Մանկավարժը կազմում է էքսկուրսիայի պլանը, որը կազմելիս համառոտ շարադրվում են ընթացքը, աշխատանքների տրամաբանական հաջորդականությունը, շոշափվող հարցերը, խմբային անհատական աշխատանքները։ Դաստիարակը որոշում է էքսկուրսիայի տեղը, ժամանակը, տևեղությունը, ընտրում երթուղին, առավել հարմար ճանապարհը՝ ելնելով տեղանքի առանձնահատկություններից։ Տեղանքը պետք է նախապես ուսումնասիրվի։ Դաստիարակը ճշտում է գիտելիքների ծավալը, որը պետք է հաղորդվի երեխաներին, ուսումնասիրում է անհրաժեշտ ձեռնարկները, տեսական նյութը, գրականություն թեմայի վերաբերյալ, ինֆորմացիայի հիմնական և լրացուցիչ աղբյուրներ։ Կազմում է առանձին մասերի տրամաբանական հաջորդականությունը, առանձնացնում խմբային անհատական դիտումների, հանգստի հատվածը։ Ուսումնասիրում է տերմինները, հասկացությունները, նախապատրաստում ոտանավորներ, հանելուկներ, ասացվածքներ, երգեր նյութի վերաբերյալ, խաղեր։ Անհրաժեշտ է նախապատրաստել պրոբլեմային, բաց հարցեր, խմբային, անհատական առաջադրանքներ։ Ընտրել նպատակահարմար մեթոդներ։ Դաստիարակը նախապատրաստում է նաև անհրաժեշտ նյութերը և պարագաները՝ հնարավորինս ներգրավելով երեխաներին։ Երեխաների ուշադրությունը գրավելու համար պետք է պարզել, թե ինչ գիտեն նրանք նյութի վերաբերյալ։ Երեխաներին պետք

է հայտնել էքսկուրսիայի նպատակը, նրանք պետք է իմանան ու՞ր են գնում, ինչու՞, ի՞նչ աշխատանքներ պետք է իրականացվեն, ի՞նչ պետք է իրենց հետ վերցնեն, ի՞նչպես հագնվեն: Հագուստը պետք է լինի հարմար, ըստ տարվա եղանակի: Երեխաներին պետք է զգուշացնել, թե ինչպես պետք է իրենց պահեն, լինեն ուշադիր, կարգապահ, պահպանեն անվտանգության կանոնները: Նրանք պետք է հստակ իմանան իրենց անելիքը: Պետք է տեղեկացնել ծնողներին և տնօրինությանը:

Անցկացման փուլում, տեղ հասնելուն պես երեխաներին մեկ անգամ ևս պետք է հիշեցնել էքսկուրսիայի նպատակը: Ապա իրականացվում է պլանավորած օբյեկտի դիտում, ուսումնասիրում: Դաստիարակը ուղղություն է տալիս երեխաների մտածողությանը, նրանց ուշադրությունը հրավիրում կարևոր տարրերի, առանձնահատկությունների վրա, նա տեսողական ընկալումը լրացնում է մեկնաբանություններով, բացատրություններով, պատմություններով, տալիս առաջադրանքներ, առաջարկում համեմատել, գտնել նմանությունները, տարբերությունները, հասկանալ կապերը, փոխկապվածությունները, տալիս է բաց հարցեր: Կարևոր է նրա գեղեցիկ խոսքը, հարուստ բառապաշարը: Նա խրախուսում է նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը: Էքսկուրսիան հանդիսանում է անձնական փորձի ձոռքբերման, նոր տպավորությունների աղբյուր, ուստի երեխաներին պետք է հնարավորություն տալ շփվել միմյանց հետ առավել ազատ միջավայրում՝ նպաստելով խոսքի, հաղորդակցման կարողությունների զարգացմանը հասակակիցների և մեծահասակների հետ: Էքսկուրսիան հնարավորություն է ստեղծում բացահայտել երեխաների անհատականությունը, առանձնահատկությունները, անձնային հատկանիշները, նախասիրությունները, բնավորությունը, իրականացնել նրանց դիտարկում, որը մանկավարժին հնարավորություն է տալիս կազմակերպել հետագա կրթադաստիարակչական աշխատանքները:[8] Էքսկուրսիայի ընթացքում հավաքվում են տարբեր նյութեր, հավաքածուներ ստեղծելու նպատակով: Այդ նյութերը հետագայում պետք է օգտագործել պարապմունքներին, խաղերի ժամանակ, գործունեության տարբեր տեսակներում: Էքսկուրսիայի վայրում կամ վերադառնալուց հետո անց է կացվում զրույց, քննարկում, հարց ու պատասխան, ամփոփում, հավաքած նյութերի ուսումնասիրություն: Անհրաժեշտ է ամփոփել էքսկուրսիան, պարզել ի՞նչ տեսան, ի՞նչ

իմացան, ի՞նչն էր ավելի հետաքրքիր, ի՞նչը դուր եկավ, ի՞նչը՝ ոչ։ Վերջում հանձնարարվում է ստեղծագործական աշխատանք՝ պատմում, կերպարվեստային կամ կառուցողական աշխատանք և այլն։ Այսպիսով՝ էքսկուրսիան լայն հնարավորություն է ստեղծում բացահայտելու, ճանաչելու աշխարհը, որտեղ ապրում ենք՝ ապահովելով ուրախ, հետաքրքիր ժամանց։ Գիտելիքների, պատկերացումների ձեռքբերումը դառնում է հաճելի, երջանկություն պարգևող գործընթաց։

1.4 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ

Էքսկուրսիաները դասակարգվում են տարբեր հիմքերով.

- Ըստ բովանդակության՝ թեմատիկ /պատմակա-տարածաշրջանային, հնագիտական, կենսագրական,/ ոսումնական /բնագիտական, մշակութագիտական, արտադրական/ ամփոփիչ, գովազդային
- Ըստ ուսուցման գործընթացում զբաղեցրած տեղի՝ ներածական, ընթացիկ, ամփոփիչ
- Ըստ մասնակիցների կազմի՝ մեծահասակների, երեխաների, անհատական, խմբային, տեղացիների, օտարերկրացիների
- Ըստ անցկացման տեղի, վայրի՝ քաղաքային, արտաքաղաղային /բնության գիրկ/, անգարանային, արտադրական, հեռակա / տեսաէքսկուրսիա/ համալիր
- Ըստ տեղափոխման եղանակի՝ քայլարշավ, տրանսպորտային, համակցված
- Ըստ լուծվող խնդիրների բնույթի՝ բնագիտական, էկոլոգիական, սոցիալ-կենցաղային, մշակութային, գեղագիտական
- Ըստ անցկացման ձևի՝ զանգվածային էքսկուրսիաներ, էքսկուրսիա-զբոսանք, էքսկուրսիա-պատմում, էքսկուրսիա-համերգ, էքսկուրսիա-թատրոն[12]

1.5 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Էքսկուրսիան պետք է համապատասխանի երեխաների հետաքրքրություններին
- Անհրաժեշտ է հստակ իմանալ մասնակիցների քանակը

- Էքսկուրսիան պետք է ուղղված լինի կոնկրետ առարկայի, երևույթի
- Նման չլինի դասի, պարապմունքի
- Պետք է պլանավորել պարապմունքին համապատասխան
- Միջավայրի մասին տեղեկատվությունը պետք է լինի գիտական, կոնկրետ, համակարգված, տարիքին համապատասխան, դաստիարակող բնույթի։

Պատկերացումների խորացման, ընդհանրացման նպատակով, իրականացվում են կրկնակի էքսկուրսիաներ, երբ տվյալ օբյեկտում տեղի են ունենում նկատելի որակական տեղաշարժեր, փոփոխություններ։ Էքսկուրսիայի բովանդակության աստիճանական բարդացումը տեղի է ունենում դիտարկվող երևույթների շրջանակի ավելացման կամ երևույթի մասին գիտելիքների խորացման հաշվին։[11]

1.6 ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՍ

- Նախօրոք ծանոթանալ դիտարկման օբյեկտին
- Ստանալ թույլատվություն, ճշտել ժամը
- Ապահովել անվտանգություն
- Հաշվի առնել եղանակը
- Ուշադրություն դարձնել երեխաների հարցերին
- Վերցնել դրոշակներ առաջին և վերջին երեխաների ձեռքին
- Ամփոփել, շնորհակալություն հայտնել
- Վերցնել ֆոտոապպարատ[11]

1.7 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Նախադպրոցական տարիքը անձի զարգացման կարևորագույն շրջանն է, երբ ձևավորվում են պատկերացումները մարդու, բնության, մշակույթի մասին, դրվում են անձնական , քաղաքացիական որակների նախադրյալները։ Էքսկուրսիան մանկապարտեզում ուսուցման կազմակերպման կարևոր ձևերից մեկն է, որն ապահովում է երեխայի մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ վառ, կոնկրետ, հուզական, պատկերացումների և տպավորությունների ձևավորում, օգնում է սեր և կապվածություն դաստիարակել բնության, մշակույթի նկատմամբ։ Այն գրավիչ միջոցառում է, որը մեծ բավականություն է պատճառում սաներին, հնարավորություն տալիս հաղորդակցվել բնության, արվեստի, պատմության հետ, ուսումնասիրել միջավայրը, մարդկանց գործունեության տեսակները և այլն։ Մանկապարտեզում էքսկուրսիայի անցկացման ժամանակ ընտրվում է կրթական խնդիրների որոշակի ոչ մեծ ծավալ, որն ապահովում է դաստիարակչական և զարգացման բովանդակություն, նպաստում դիտողունակության, հետաքրքրասիրության զարգացում։ Ընտրվում են ծրագրային վերջնարդյունքներ, չափորոշչային պահանջներ, որոնք պետք է

ապահովվեն, մշակվում է թեման, ընտրվում օբյեկտը, որոշվում մեթոդները, կազմվում պլանը, նախապատրաստվում են անհրաժեշտ նյութերը և պարագաները։[10] Նախադպրոցական տարիքի առանձնահատկություններից է ճանաչողական հոգեկան գործընթացների ինտենսիվ զարգացումը, որի համար մեծ խթան է հանդիսանում էքսկուրսիան, քանի որ բոլոր հոգեկան գործընթացները ուղղվում են օբյեկտի բազմակողմանի ուսումնասիրմանը։ Կարևոր խնդիր է ուղղորդել և կենտրոնացնել երեխաների ուշադրությունը ուսումնասիրման օբյեկտի վրա։ Պետք է հիշել, որ նախադպրոցականների ուշադրությունը անկայուն է, նրանք շուտ են հոգնում, մոտավորապես յուրաքանչյուր 9-15 րոպեն մեկ տեղի է ունենում ուշադրության ճգնաժամ և անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր ուշադրությունը կենտրոնացնելու համար։ Ուշադրության ճգնաժամից խուսափելու համար անհրաժեշտ է տեսողական ընկալումը զուգակցել լսողականի հետ, օբյեկտի ցուցադրումը պետք է լինի տրամաբանական հաջորդականությամբ, ակտիվությամբ զուգակցված, հասանելի, օգտագործվի կատակ, հումոր, հարց ու պատասխան, գեղեցիկ խոսք։[8] Շատ կարևոր է հուզական կողմը, երեխաները պետք է ոչ միայն դիտեն, այլ նաև ապրումակցեն, տեսածը պետք է առաջացնի հիացմունք, ուրախություն, զոհունակություն, դժգոհություն, անհանգստություն, այլ զգացմունքներ։ Հուզական ոլորտի ակտիվացումը ընկալման պրոցեսում գիտելիքների արդյունավետ յուրացման ճանապարհ է։ Նախադպրոցական տարիքի առանձնահատկություններից է նաև հետաքրքրությունների կարճաժամկետությունը, ուստի նույն թեմային կրկին վերադառնալը նպաստում է թեմայի վերաբերյալ հետաքրքրության պահպանմանը։[8] Ելնելով անցկացման բարդությունից՝ խորհուրդ է տրվում է էքսկուրսիաներ անցկացնել միջին և ավագ խմբում, իսկ կրտսերների հետ՝ մանկապարտեզի ներսում։ Չնայած իմ աշխատանքային պրակտիկայում հաջողությամբ անց եմ կացրել մի մի շարք արտագնա էքսկուրսիաներ նաև Կրտսեր երկրորդ խմբում։ Կարևոր է նախադպրոցական տարիքից դաստիարակել սեր և կապվածություն բնության մշակութային արժեքների նկատմամբ, հայրենասիրություն, հոգևոր-բարոյական, գեղագիտական որակներ, քանի որ այս տարիքում ձևավորվում են պատկերացումները շրջակա աշխարհի վերաբերյալ, դրվում բնության, հասարակության հետ փոխհարաբերությունների հիմքերը։ Շրջակա միջավայրի հետ ծանոթացումը, հարազատ տարածաշրջանի բնության, մշակույթի հետ ծանոթացումը նրանց նկատմամբ սիրո և հոգատարության վերաբերմունքի դաստիարակության հիմք են դառնում։ Բնագիտական էքսկուրսիաները, մշակութային այցելությունները թանգարաններ, ցուցահանդեսներ սովորեցնում են հասկանալ արվեստի գործերը, տեսնել գեղեցիկը, զգալ գեղեցիկը։ Ուսումնական էքսկուրսիաները արտադրական ձեռնարկություններ հնարավորություն են տալիս տեսնել արտադրական գործընթացը, ծանոթանալ մասնագիտություններին, մասնագիտական գործիքներին, պատկերացում կազմել տարբեր իրերի ստեղծման գործընթացի վերաբերյալ։ Մանկապարտեզում խորհուրդ է

տրվում անցկացնել հետևյալ էքսկուրսիաները՝ դեպի բանջարանոց, այգի, անտառ, բնության գիրկ, հայրենի բնակավայրի տեսարժան վայրերը,փոստային բաժանմունք, կաթի, հրուշակեղենի, փայտամշակման արտադրամաս, կայարան, տպարան, պատմական հուշարձաններ, թանգարաններ, մանկագիրների տուն-թանգարան և այլն։[11]

1.8 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ՈՐՊԵՍ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԵՐԱՌՄԱՆ ՄԻՋՈՑ

Արտադասարանական աշխատանքները, էքսկուրսիաները, մշակութային այցերը երեխաների համար փորձի յուրացման հնարավորություն են ստեղծում։ ԿԱՊԿՈՒ երեխաների համար, որոնց հասարակական հաղորդակցման փորձը ավելի սահմանափակ է, դա ունի առաջնային նշանակություն։ Անգնահատելի է այս միջոցառումների դերը նրանց սոցիալականացման, ներառման գործում։ Էքսկուրսիան հնարավորություն է տալիս ավելացնել ուսուցման և դաստիարակության զարգացնող ազդեցությունը և բարձրացնել երեխաների և նրանց ծնողների կյանքի որակը։ Էքսկուրսիան կարևոր նշանակություն ունի երեխաների սոցիալական փորձի յուրացման, ճանաչողության զարգացման գործում, նպաստում է շրջապատի մասին պատկերացումների, հույզերի, բարոյական գծերի, աշխարհայացքի ձևավորմանը։ Էքսկուրսիաները ունեն շտկողական, փոխհատուցողական ազդեցություն ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում։ Նախ՝ այս երեխաների սոցիալական ակտիվությունը սահմանապակ է, ուստի կարևոր է շրջապատող իրականության ուսումնասիրմանը ուղղված կազմակերպված, նպատակաուղղված աշխատանքը։ Ինչպես նաև՝ հաշվի առնելով այս երեխաների մտածողության առանձնահատկությունները, երբ մեծ է ակնառու-զգայական մտածողության դերը, էքսկուրսիան դառնում է մտավոր զարգացման աղբյուր։ Էքսկուրսիան դրական ազդեցություն է ունենում նաև երեխաների ծնողների վրա, քանի որ նրանցից շատերը խուսափում են իրենց երեխաների հետ հասարակական վայրերում գտնվելուց և վարում են փակ կենսակերպ, որը բերում է ընտանիքի հուզական ֆոնի իջեցման։ Էքսկուրսիաներին մասնակցությունը բերում է ծնողների տագնապայնության իջեցման, նրանց ազատում ամոթի զգացումից և նրանք մեծ հաճույքով իրենց երեխաների հետ մասնակցում են այս միջոցառումներին։

ԳԼՈՒԽ2 <<ԷՔՍԿՈՒՐՍԻՅԱ ԴԵՊԻ ԲԵՐԴ-ԱՄՐՈՑ ՂԱԼԻՆՋԱՔԱՐ>>

2.1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Էքսկուրսիայի օբյեկտը՝ Բերդավանի Բերդ-ամրոց Ղալինջաքար։ Ամսաթիվը՝ 5.12.23. Միջին խումբ. Երեխաների քանակը՝ 24. Դիտարկողներ՝ փոխտնօրեն, հոգեբան. Հյուր՝ աշխարհագրության ուսուցիչ, միաժամանակ խմբի երեխաներից մեկի պապիկ: Էքսկուրսիայի տեսակը՝ ըստ բովանդակության՝ ուսումնական, պատմական, ըստ տեղափոխման եղանակի՝ տրանսպորտային, ըստ մասնակիցների կազմի՝ երեխաների, ըստ անցկացման վայրի՝ արտաքաղաքային: Էքսկուրսիային նախորդել են << Հայրենիք>> և << Իմ հայրենի գյուղը>> թեմաներով պարապմունքները, որոնց ընթացքում զրուցել ենք մեր հայրենիքի և մեր գյուղի մասին, ուսումնասիրել մեր երկրի պետական խորհրդանիշները, սովորել օրհներգի առաջին մասը։ Երեխաներից ընդամենը երկուսը գիտեին, որ մեր գյուղից քիչ հեռու հինավուրց բերդ կա, ևս երկուսը այն տեսել էին հեռվից։ Ուսումնասիրել դեպի ամրոց տանող ճանապարհները, ընտրել առավել հարմար երթուղին։ Դեպի ամրոց տանող ճանապարհը խորդուբորդ է , ակոսներով, առանց խճապատման, ուստի առավել նպատակահարմար է գնալ տրանսպորտով, ոչ թե ոտքով։ Ծանոթանալ տեղանքին՝ Ղալինջաքար ամրոցը գտնվում է Գոնչուտ սարի փեշին, Կողբ գետակի աջ ափին, փոքր բլրակի վրա։ Տեղյակ պահել էքսկուրսիայի կազմակերպման մասին տնօրենին և փոխտնօրենին, խնդրել մասնակցել որպես դիտարկողներ։ Զգուշացնել նաև հոգեբանին, օգնականին։ Տեղեկացնել ծնողներին, ներգրավել տրանսպորտի, տեղափոխման կազմակերպման գործում։ Զգուշացնել հագուստի վերաբերյալ, որպեսզի այն լինի հարմար և ըստ եղանակի։ Խնդրել մասնակցել էքսկուրսիային խմբի երեխաներից մեկի պապիկին, ով վաստակաշատ աշխարհագրության ուսուցիչ է և կարող է հետաքրքիր փաստեր պատմել Բերդի մասին։

Նախապատրաստել տեսական նյութ՝ ուսումնասիրելով ինֆորմացիայի մի քանի աղբյուրներ։ <<Բերդավանի Բերդ-ամրոցը կառուցել է Դավիթ Անհողին թագավորը 11րդ դարում։ Բերդը գտնվում է եռանկյունաաև բլրակի վրա։ Ունի եռանկյուն հատակագիծ՝ մոտ քսան մետր կողմերով և կլորավուն անկյուններով։ Ունի ինը գլանաձև սյուներ, պատերի հաստությունը մեկ մետրից մի փոքր ավել է։ Պատերի բարձրությունը արևմուտքում և հարավում՝ հինգ ու կես, իսկ արևելքում և հյուսիսում տաս ու կես մետր են։ Միակ մուտքը ունի մեկ մետր լայնություն։ Կառուցված է դեղին ֆելզիտե մանր քարերի անկանոն շարվածքով։ Պաշտպանական դեր է ունեցել,

ծառայել է որպես զորակայան։ Ունեցել է երկու հարկ, սակայն պահպանվել են միայն երկրորդ հարկ տանող աւտիճանները և պատերի մի մասը։ Ունի դիտաճեղքեր և խոռոչներ։ Ներքին բակի շուրջը ժամանակին եղել են կացարաններ և պահեստներ՝ մոտ երկու-երեք մետրանոց ։ Ունեցել է գետնուղի, որը արևելյան կողմից իջել է դեպի գետակը։ Գետնուղու մի մասը երևում է արևելյան աշտարակի ստորին մասում։ Բերդի մոտակայքում եղել է գյուղատեղի, միջնադարյան եկեղեցի, մատուռ, գերեզմանատուն, որոնց ավերակները պահպանված են։ Պահպանված են նաև մի շարք խաչքարեր։ Բերդի մասին առաջին անգամ հիշատակվում է անհայտ վրացի մի հեղինակի մոտ 1123թ, որը այն անվանում է Ղալինջաքար։ Ղալինջաքար ստուգաբանվում է որպես առատ քարով կառուցված։>> Ուսումնասիրել տերմինները. դիտաճեղք՝ բերդի պատուհանները, զորակայան՝ զինվորների կացարան, գետնուղի՝ գետնի տակ փորված ճանապարհ։ Գտնել ոտանավոր , երգ, հանելուկ թեմայի վերաբերյալ։ Այլ տարբերակ չգտնելով՝ նախատեսում եմ արտասանել մեր դաստիարակներից մեկի հորինած ոտանավորը մեր գյուղի մասին։

Մտիր Բերդավան՝ ծաղկած ու շքեղ,

Մեր ամրոցի պես չկա ոչ մի տեղ։

Իմ Բերդի գյուղ, իմ հին ամրոց,

Հրաշք օրրան, իմ Բերդավան։

Տեղեկացնել երեխաներին, որ գնալու ենք էքսկուրսիա՝ մեր գյուղի Բերդը տեսնելու, որպեսզի իմանանք, թե ինչու են մեր գյուղը անվանում Բերդավան։ Զգուշացնել, թե ինչպես հագնվեն, ինչ վերցնեն իրենց հետ։ Քննարկել, թե ինչպես պետք է իրենց պահեն էքսկուրսիայի ժամանակ։ Բացատրել, որ պետք է լինել կարգապահ՝ պահպանելն անվտանգության կանոնները, չհեռանան խմբից, նայեն ոտքերի տակ, լինեն զգույշ, չվազվզեն ձորակի մոտ, օգնեն ընկերներին բարձրանալ բլրակը։ Լսեն մեծերին, ուշադիր հետևեն նրանց հրահանգներին։ Ուշադիր զննեն շրջակայքը, փորձեն մտապահել տեսածը։

2.2 ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՊԼԱՆԸ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ.՝ Իմ շրջակա աշխարհը

ԹԵՄԱ՝ << Էքսկուրսիա դեպի Բերդ-ամրոց Ղալինջաքար >>

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Ժողովրդավարական և քաղաքացիական

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ՝ Ունենա պատկերացումներ հայրենի երկրի, իր բնակավայրի՝ գյուղի մասին։ Ճանաչի իր երկրի դրոշը, զինանշանը, օրհներգը։

ՆՊԱՏԱԿԸ՝ Անվանի մեր գյուղը, հասկանա որտեղից է առաջացել գյուղի անվան պատմությունը։ Թվարկի մեր երկրի պետական խորհրդանիշները, ճանաչի դրանք այլ միջավայրում, նկարագրի դրոշը, զինանշանը, երգի հիմնի առաջին մասը՝ լսելով երաժշտությունը

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ Ձայնարկիչ՝ օրհներգի և շուրջպարի ձայնարկություններով, հեռադիտակներ

Միկրոավտոբուսից իջնել բլրակին չհասած բարձրադիր հատվածում, որտեղից պարզ երևում են և գյուղը, և Բերդը։

ԽԹԱՆՈՒՄ. Կանգնել կիսաշրջանաձև, այնպես, որ տեսնեն գյուղը։ Մտագրոհի մեթոդով պարզել, թե ինչ են հիշում երեխաները մեր գյուղի մասին։ Հարցեր.

- Ի՞նչպես են անվանում մեր գյուղը։
- Ի՞նչու են անվանում Բերդավան։
- Էլ ի՞նչեր կան մեր գյուղում։
- Ո՞րտեղ է գտնվում մեր գյուղը։
- Ո՞ւրիշ ինչ գյուղեր գիտեք։
- Հիմա մենք ո՞ւր ենք եկել։

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ. Դիտել Բերդը հեռվից։

—Ո՞րտեղ է գտնվում Բերդը, ինչ կա կողքը, ինչ սար է, ի՞նչ է գետակի անունը։

—Ի՞նչի է նման Բերդը։ Ի՞նչ երկրաչափական պատկերի։ Ի՞նչով է տարբերվում եռանկյունուց։

—Իսկ այն ի՞նչ է ծածանվում Բերդի վրա, քանի՞ գույն ունի, ո՞րոնք են գույները։

—Ի՞նչ գույնի է բերդը, ի՞նչ չափի են քարերը, էլ ո՞րտեղ եք տեսել այս քարերից։

Պատմել, որ այս քարը կոչվում է դեղին ֆելզիտ, սրանից մեր մոտ շատ կա, քանի որ մոտակայքում քարի հանք կա, որտեղից բոլորը այս քարը բերում և կառուցում են իրենց տները։

—Ի՞նչ նշան է այս ցուցանակի վրա, ո՞րտեղ ենք այն էլի տեսել, ի՞նչ պատկերներ կան վրան։

Եկեք պտտվենք շուրջը, տեսնենք Բերդը դրսից, ապա ներս կմտնենք։ Նայեք այս սյուներին, տեսեք ինչ մեծ են։

— Ի՞նչի են նման սյուները։ Եկեք հաշվենք սյուները։

Նայեք, պատերին, տեսնում եք, աջ կողմում պատերը բարձր են, իսկ ձախ կողմում ցածր։ Նայեք պատուհաններին։ Բերդի պատուհաններին ասում են դիտաճեղք, այսինքն անցք դիտելու համար։ Եկեք հաշվենք դիտաճեղքերը։ Իսկ հիմա եկեք ներս մտնենք։

—Քանի՞ մուտք եք տեսնում ։

Բայց մուտքով մտնելիս ուշադրություն դարձրեք պատերի հաստությանը, եկեք չափենք, տեսեք ինչ հաստ, լայն պատեր են։ Եկեք ներս մտնենք և շրջենք ներսում։ Պատմել տեսական նյութը. Վաղուց, շատ-շատ մի թագավոր է եղել, անունը՝ Դավիթ, մեր Դավիթի անունից։ Նա կառուցել է այս բերդը, որպեսզի մարդիկ այստեղ պաշտպանվեն, թաքնվեն, երբ իրենց վրա թշնամիները հարձակվեն։ Մեր գյուղի մարդկանց տները եղել են այստեղ, Բերդի մոտ, և գյուղացիները այստեղ պաշտպանվել են, զինվորները այստեղ պահել են իրենց զենքը, ուտելիքը։ Այստեղ ներսում կացարաններ, սենյակներ են եղել և պահեստներ, որոնք հիմա քանդվել են, չեն պահպանվել։

—Տեսեք, այստեղ աստիճաններ կան, ի՞նչ եք կարծում, ինչի համար են եղել նրանք։

Այո, ճիշտ եք, Բերդը երկրորդ հարկ է ունեցել, որը հիմա քանդվել է։

—Իսկ սա, ի՞նչ է, ի՞նչ եք կարծում, ի՞նչի է նման, ի՞նչի համար։

—Այո, փոքրիկ դուռ է, բայց հիշում եք, երբ դրսից նայեցինք, միայն մեկ մուտք կար այդ ինչպես է ստացվել

Այս փոքրիկ մուտքը գետնուղու համար է։ Այստեղից գետնի տակով ճանապարհ է եղել դեպի գետակը, որպեսզի մարդիկ շրջափակված ժամանակ կարողանան գետնի տակով գնան գետակի մոտ, ջուր բերելու և թշնամին իրենց չտեսնի և չբռնի։ Բայց հիմա գետնուղին փլվել է, մուտքը փակվել։ Բերդը անվանում են նաև Ղալինջաքար, որ նշանակում է առատ քար։

—Ինչ եք կարծում ինչու են անվանել առատ քա

Հիմա լսենք, թե ինչ կպատմի մեզ Էլյայի պապիկը Բերդի մասին։ Պատասխանել երեխաների հարցերին։ Ապա կանգնել մեր դրոշի ներքո, ես կմիացնեմ երաժշտությունը, կփորձեք գուշակել ինչ երգ է և երգել։ Միացնել օրհներգը։ Շատ-շատ

վաղուց մեր պապերի պապերը մեզ նման կանգնել են այստեզ, մեզ նման երգել: Նաև շրջան են կազմել և պարել են մեր հայկական ժողովրդական պարերը: Եկեք մենք էլ մեր պապերի նման այստեղ պարենք մեր Շուրջպարը: Պարել Հայկական Շուրջպարը: Դուրս գալ Բերդից, ցույց տալ երեխաներին հին գյուղատեղին, պատմել, որ այստեղ են եղել հին գյուղի տները: Ցույց տալ եկեղեցու ավերակները, խաչքարերը, ուշադրություն դարձնել նախշերին: Պատմել, որ այստեղ են ապրել մեր պապերի պապերը, հետագայում մարդիկ իրենց տները կառուցել են գետին, աղբյուրներին ավելի մոտ և գյուղը տեղափոխվել է ներքև, մի փոքր հեռանալով Բերդից: Շատ կան գյուղեր, բայց մեր Բերդից ոչ մի տեղ չկա : Արտասանել ոտանավորը: Հեռադիտակներով դիտել գյուղը Բերդի մոտից, փորձել գտնել ծանոթ օբյեկտներ: Երեխաներին հանձնարարել հավաքել ֆելզիտե քարի կտորներ, հավաքածու կազմելու համար, որը կօգտագործենք <<Քարեր>> թեմայի ուսումնասիրման ժամանակ: Հիշել, որ Երևանը անվանում էին վարդագույն գեղեցկուհի, քանի որ շենքերը վարդագույն քարից են, իսկ մեր գյուղի տները և մեր Բերդը դեղին ֆելզիտից են: Հավաքած քարերից առանձնացնել մանրերը, խոշորները տանել մանկապարտեզ հավաքածու ստեղծելու համար: Մանր քարերից յուրաքանչյուր երեխայի տալ երեքական քար, ապա նրանց բաժանել երկու խմբի և խաղալ <<Նետիր շրջանի մեջ >> խաղը երկու թիմերի միջև մրցույթի ձևով: Խաղում կհաղթի ընկերությունը:

Ընթացքում կատարել ֆոտոներ: Ինչպես նաև ուշադրություն դարձնել, թե ինչպես են պահում երեխաները իրենց անծանոթ միջավայրում հասակակիցների և մեծահասակների հետ փոխհարաբերություններում, կատարել նշումներ հետագա կրթադաստիարակչական աշխատանքների պլանավորման համար:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ. Զրույց երեխաների հետ.

- Ի՞նչ տեսանք:
- Ի՞նչն էր ավելի հետաքրքիր:
- Ի՞նչը դուր եկավ:
- Ի՞նը դուր չեկավ:
- Ի՞նչ գույն ուներ Բերդը:
- Ի՞նչ հոտ եք զգում:
- Ի՞նչ ձայներ եք լսում:
- Ի՞նչ եք զգում, երբ նայում եք Բերդին:
- Ի՞նչ կարող ենք անել մենք, որ ուրիշներն էլ սիրեն Բերդը:

Խոսող փայտիկի մեթոդով, կխոսեն բոլորը՝ պատասխանելով առնվազն մեկ հարցի

Հավաքել շրջակայքի աղբը, լցնել աղբարկղը: Ցտեսություն ասել Բերդին, վերադառնալ մանկապարտեզ:

Առաջարարկել մի քանի հոգու ըստ ցանկության պատմել էքսկուրսիայի, Բերդի մասին, իրենց տպավորությունների մասին: Խմբին հանձնարարել նկարել Բերդը: Նկարներով կազմել <<Իմ Բերդը>> գրքույկ:

2.3 ԴԻՏԱՐԿՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Էքսկուրսիային մասնակցել և էքսկուրսիան դիտարկել են մանկապարտեզի փոխտնօրենը և հոգեբանը: Դիտարկողները իրենց պատասխաններում նշել են, որ իրենց կարծիքով դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակներին՝ երեխաները էքսկուրսիայից հետո կանվանեն մեր գյուղը՝ հասկանալով, թե որտեղից է առաջացել գյուղի անունը, քանի որ խմբի բոլոր երեխաները ակտիվորեն, մեծ հետաքրքրությամբ, ուսումնասիրում էր Բերդը, նրա հետ կապում գյուղի անունը, բացատրում ինչպես է այն առաջացել: Երեխաները նաև մեծ ոգևորությամբ թվարկում էին Հայաստանի խորհրդանիշները, նկարագրում դրանք, երգում օրհներգի առաջին մասը: Դիտարկողները նշում են, որ էքսկուրսիայի ժամանակ բոլոր երեխաները ունեին բարձր տրամադրություն, ակտիվ էին, մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրում էին ամրոցը, քարերը, կլանված լսում էին պատմածը, հարցեր տալիս, պատասխանում հարցերին: Տիրում էր բացարձակ անկաշկանդ մթնոլորտ, երեխաները աշխույժ էին , ոգևորված, զարմացած, գոհ: Նրանք նաև շատ տպավորված էին պարսպի վրա ծածանվող դրոշից, ոգևորված երգում էին, փորձում պարել: Նրանց նաև շատ դուր էր եկել միկրոավտոբուսով ճամփորդությունը, ոմանք առաջին անգամ էին օգտվում: Դիտարկողները նշել էին, որ դաստիարակի կողմից ընտրված հետազոտվող թեման հետաքրքիր և շատ կարևոր թեմա է մանկապարտեզում ուսուցման և դաստիարակության կազմակերպման, դրական հուզական մթնոլորտի ապահովման համար: Երեխաները հնարավորություն ստացան ծանոթանալ շրջակա միջավայրին, ձեռք բերեցին տարիքին համապատասխան գիտելիքներ: Երեխաները անմոռանալի օր ունեցան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հետազոտական աշխատանքի արդյունքում ինձ համար պարզ դարձավ, որ էքսկուրսիան որպես երևույթ գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից, իսկ որպես ուսուցման ձև նկարագրվել և ներ է մուծվել մանկավարժության մեջ 18-19րդ դարերում: Էքսկուրսիայի էությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս ծանոթանալ բնության, մշակութային օբյեկտներին, մեծահասակների գործունեությանը բնական իրավիճակում՝ լուծելով կրթադաստիարակչական բազմազան խնդիրներ: Էքսկուրսիան ունի իր կառուցվածքը, իրականացվում է երեք հաջորդական փուլերով՝ նախապատրաստում, անցկացում, ամփոփում, ունի բազմաթիվ տարատեսակներ, որոնք դասակարգվում են տարբեր հիմքերով: Էքսկուրսիայի կազմակերպմանը ներկայացվում են մի շարք պահանջներ, կան մի շարք խորհուրդներ, որոնց հետևելով կարող ենք խուսափել էքսկուրսիայի ընթացքում առաջացող բարդություններից: Էքսկուրսիայի կազմակերպումը նախադպրոցական տարիքում ունի իր առանձնահատկությունները, կախված նախադպրոցականների տարիքային և հոգեկան զարգացման առանձնահատկություններից: Հաշվի առնելով նախադպրոցական տարիքում հոգեկան զրգազման առանձնահատկությունները, նախապես պլանավորելով և մանրամասն նախապատրաստական աշխատանքներ կատարելով՝ հնարավոր է կազմակերպել էքսկուրսիաներ, հասնել դրված նպատակների իրականացմանը մանկապարտեզի բոլոր խմբերում: Էքսկուրսիան արդյունավետ է նաև ԿԱՊԿՈՒ երեխաների ներառման կազմակերպման , նրանց սոցիալականացման գործընթացում, այն հնարավորություն է տալիս ավելացնել ուսուցման և դաստիարակության զարգացնող ազդեցությունը: Էքսկուրսիան հնարավորություն է տալիս իրականացնել անձի կրթություն, ուսուցում, դաստիարակություն, զարգացում, ապահովել նախադպրոցական կրթության կարողունակությունների ձևավորում ծրագրային վերջնարդյունքների ձևավորման միջոցով:

Հետազոտական աշխատանքի սկզբում նախ ինձ համար պարզեցի հայերեն շատ գեղեցիկ շրջագայություն բառը, որը կարող ենք օգտագործել որպես էքսկուրսիա տերմինին համարժեք: Աշխատանքի ընթացքում հասկացա, որ բացի պարապմունքները, կրթության այլ ձևերը ևս կարող են նպատակաուղղված լինել ծրագրային բաղադրիչներում նախատեսված վերջնարդյունքներից բխող

նպատակների իրագործմանը, կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը: Իմ կազմակերպած էքսկուրսիայի ընթացքում հնարավորություն ստեղծվեց ապահովել ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության բաղադրիչ հանդիսացող հայրենիքի, հայրենի գյուղի, նրա տեսարժան վայրերի և Հայաստանի պետական խորհրդանիշների ճանաչման վերջնարդյունքների իրագործմանը, իրականացվեցին հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության ձևավորմանը ուղղված աշխատանքներ: Կարծում եմ էքսկուրսիայից հետո բոլոր երեխաները կանվանեն մեր գյուղը՝ հասկանալով որտեղից է առաջացել գյուղի անվան պատմությունը, հետաքրքրություն կցուցաբերեն մեր գյուղի տեսարժան վայրերի նկատմամբ, հպարտության զգացում կունենան մեր գյուղի ներկայի և անցյալի, հավատ ապագայի հանդեպ: Կթվարկեն և կնկարագրեն Հայաստանի պետական խորհրդանիշները, կճանաչեն դրանք այլ վայրերում տեսնելիս, կարձագանքեն օրհներգի երաժշտությունը լսելուն պես, կերգեն առաջին մասը, հարգանք կցուցաբերեն մեր խորհրդանիշների հանդեպ, մեր հայրենիքի հանդեպ: Էքսկուրսիայի ընթացքում ամրապնդվեցին գիտելիքները, պատկերացումները մեր հայրենիքի, մեր գյուղի, նրա տեսարժան վայրերի, մեր պետական խորհրդանիշների մասին, որոնց ծանոթացել էինք <<Հայրենիք>> և <<Իմ գյուղը >> թեմաների ուսումնասիրման ժամանակ: Իրականացվեցին էքսկուրսիայի ժամանակ իմ առջև դրվածնպատակները: Այս թեմայի շրջանակներում կուզենայի խորհուրդ տալ գործընկերներիս, որ չվախենան դուրս գալ մանկապարտեզի, խմբասենյակի շրջանակներից, օգտագործեն ցանկացած հնարավորություն , ելնելով իրենց տարածաշրջանի առանձնահատկություններից, էքսկուրսիայի միջոցով կրթադաստիարական աշխատանքների կազմակերպման համար: Բնությունը, մշակույթը, իրական կյանքը կրթության արդյունավետության բարձրացման բազմաթիվ ու բազմազան հնարավորություններ են ընձեռում, որոնք պետք չէ բաց թողնել՝ կազմակերպելով կրթությունը միայն մանկապարտեզի տարածքում:Էքսկուրսիան մանկապարտեզում կրթության կազմակերպման այն ձևն է, որը հնարավորություն է տալիս ձևավորել շրջապատի մասին պատկերացումներ՝ դուրս գալով մանկապարտեզի տարածքից դեպի հասարակություն, ստանալ դրական հույզեր, ձեռք բերել նոր հետաքրքրություններ, նոր փոխհարաբերությունների արդյունքում, ոչ ստանդարտ

պայմաններում: Այն առաջացնում է բարի հիշողություններ, վառ տպավորություններ, անփոխարինելի զգացողություններ: Էքսկուրսիայի ժամանակ սովորելը դառնում է հաճելի, հետաքրքիր, ակտիվ գործունեություն, որը նպաստում է հետաքրքրքսիրության, ինքնուրույնության ձևավորմանը: Էքսկուրսիայի ժամանակ ձևավորվում են վարքի մոդելներ, երեխաները ավելի վստահ են զգում իրենց հասարակության մեջ, դառնում ավելի կարգապահ, ինքնուրույն, ստեղծվում են հազորդակցման լայն հնարավորություններ: Երեխաները հնարավորություն են ստանում սովորել ճիշտ պահել իրենց տարբեր իրավիճակներում, տրանսպորտի մեջ, մշակութային օջախներում, ամրապնդվում են վարքի կանոնները: Էքսկուրսիան ձևավորում է վերաբերմունք պատմա-մշակութային օբյեկտների նկատմամբ, արժեհամակարգ, նպաստում է նախադպրոցական կրթության կարողունակությունների ձևավորմանը, որը նախադպրոցական կրթության վերջնական նպատակն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. files.student-it.ru.Кирюханцев К.А<<. Экскурсия-важная форма организации об учения детей дошкольного возраста.>>

2. Ա. Սուքիասյան <<Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան>>

3 .http/www.dis.lib.net <<История становления и развития экскурсионного метода>>

4. https/www.prodlenka.org/metodicheskie-razrabotki/ <<.Экскурсия как форма обучения>>

5. https//m.facebook.com.posts<<Խ. Աբովյանի տուն-թանգարան>>

6. www.infourok/ <<.Экскурсия как важная форма обучения>>

7. https//e.koncept/Научно-методический журнал

8. Матюшкина М. В.; Михальчик Т.С.; Прокина Н.Ф. << Возрастная педагогика и психология уч.пособ. для студ. пед. Инст. М.Просвещение>>

9. Долженко Г.П.<< Экскурсионное дело>> учебное пособие

10.Беляева Л.В. << Организация методического сопровождения реализации ФГОС дошкольного образования в образовательных организациях реализующих программы дошкольного образования >> URL HYPERLINK "url:obrazovatelnye-standarty": HYPERLINK "url:obrazovatelnye-standarty"obrazovatelnye HYPERLINK "url:obrazovatelnye-standarty"- HYPERLINK "url:obrazovatelnye-standarty"standarty

11. Булгакова Г.В. Экскурсия как средство внеурочной деятельности

12. Емельянов Б.А.<< Экскурсоведение>> М. ЦРИБ << ТУРИСТ >> 1992

13. Редина Т.В. <<Включение детей с тяжелим и нарушениями развития в социум с помощю внеклассных мероприятий>> М. 2019